## Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

01 հոկտեմբերի 2021թ.
ժամը՝ 11:45

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Օհանյան, Վ.Քեռյան, Մ.Համբարձումյան, Է.Մնացականյան, Ս.Սարգսյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Ներսիսյան

### 1. *Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ*

| ***Չափաբաժնի համարը*** | ***Չափաբաժնի անվանումը*** | ***Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*** |
|---|---|---|
| 1 | Ղեկավարի գրասեղան (Լրակազմ) | 1200000 |
| 2 | Սեղան խորհրդակցության | 1200000 |
| 3 | Պահարան (գրապահարան-զգեստապահարան) | 1200000 |
| 4 | Փափուկ կահույք (լրակազմ) | 3920000 |
| 5 | Փափուկ կահույք (բազմոց) | 1200000 |
| 6 | Բազկաթոռ (ղեկավարի) | 800000 |
| 7 | Աթոռ գրասենյակային | 2800000 |

### 2. *Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ*

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 29.09.2021 թ.-ին ժամը 11:45-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 30.09.2021 թ.-ին ժամը 11:45-ին:

### 3. *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.*

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Հասցեներ |
|---|---|---|
| 1 | «ՄԵՐԿԱԴՈ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 110 |
| 2 | «Ֆոտոն»ՍՊԸ | Ք.Երևան, Ռոստոմի 58 |
| 3 | «Զորաշեն» ՍՊԸ | ք. Երևան Աշտարակի խճ. 2բ |
| 4 | «Լեվան» ՍՊԸ | Արարատի մարզ՝ գ. Արգավանդ Երկաթգծի 4-րդ փողոց 1-ին տուն |
| 5 | «Մեգաօֆիս» ՍՊԸ | Փարաքար-Թայրով Մայրաքաղաքային 200 |

### *4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ*

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

### *5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

### *6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ*

| Չ/Հ | Մասնակիցներ | Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | «Մերկադո» ՍՊԸ | 986666.67 | 20% | 1184000 | 525733 | 20% | 630879.60 |
| | «Ֆոտոն» ՍՊԸ | 666667 | 20% | 800000.4 | 532400 | 20% | 638880.00 |
| | «Զորաշեն» ՍՊԸ | 785733 | 20% | 942879.6 | 785733 | 20% | 942879.60 |
| 2 | «Ֆոտոն» ՍՊԸ | 533333 | 20% | 639999.6 | 437000 | 20% | 524400.00 |
| | «Մերկադո» ՍՊԸ | 986666.67 | 20% | 118400 | 447756 | 20% | 537307.20 |
| | «Զորաշեն» ՍՊԸ | 691067 | 20% | 829280.4 | 691067 | 20% | 829280.40 |
| 3 | «Ֆոտոն» ՍՊԸ | 566667 | 20% | 680000.4 | 460000 | 20% | 552000.00 |
| | «Մերկադո» ՍՊԸ | 986666.67 | 20% | 1184000 | 489333 | 20% | 587199.60 |
| | «Զորաշեն» ՍՊԸ | 941933 | 20% | 1130319.6 | 941933 | 20% | 1130319.60 |
| 4 | «Մերկադո» ՍՊԸ | 3246666.67 | 20% | 3896000 | 3214200 | 20% | 3857040.00 |
| | «Ֆոտոն» ՍՊԸ | 6000000 | 20% | 7200000 | 6000000 | 20% | 7200000.00 |
| | «Զորաշեն» ՍՊԸ | 10266667 | 20% | 12320000.4 | 10266667 | 20% | 12320000.40 |
| 5 | «Մերկադո» ՍՊԸ | 993333.34 | 20% | 1192000 | 983400 | 20% | 1180080.00 |
| | «Ֆոտոն» ՍՊԸ | 2666667 | 20% | 3200000.4 | 2666667 | 20% | 3200000.40 |
| | «Զորաշեն» ՍՊԸ | 11866667 | 20% | 14240000.4 | 11866667 | 20% | 14240000.40 |
| 6 | «Մերկադո» ՍՊԸ | 660000 | 20% | 792000 | 574200 | 20% | 689040.00 |
| | «Լեվան» ՍՊԸ | 900000 | 20% | 1080000 | 580800 | 20% | 696960.00 |
| | «Ֆոտոն» ՍՊԸ | 1333333 | 20% | 1599999.6 | 1333333 | 20% | 1599999.60 |
| | «Մեգաօֆիս» ՍՊԸ | 1600000 | 20% | 1920000 | 1600000 | 20% | 1920000.00 |
| 7 | «Մերկադո» ՍՊԸ | 2293333.34 | 20% | 2752000 | 1731000 | 20% | 2077200.00 |
| | «Լեվան» ՍՊԸ | 3033333 | 20% | 3639999.6 | 1754000 | 20% | 2104800.00 |
| | «Ֆոտոն» ՍՊԸ | 4000000 | 20% | 4800000 | 4000000 | 20% | 4800000.00 |
| | «Մեգաօֆիս» ՍՊԸ | 8000000 | 20% | 9600000 | 8000000 | 20% | 9600000.00 |

Աճուրդն ամփոփվել է 30.09.2021թ-ին և Համակարգի կողմից 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Մերկադո» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

«Զորաշեն» ՍՊԸ-ի, «Լեվան» ՍՊԸ-ի և «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտերը մերժել:

### *7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին*

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ համակարգի կողմից 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Մերկադո» ՍՊԸ-ի, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. **«Մերկադո» ՍՊԸ**-ի կողմից ներկայացրած հավելված 1.2-ում սխալ է լրացված ծածկագիրը: Իսկ առաջարկվող ապրանքի նկարագիր դաշտում՝ **1-ին չափաբաժնում** հստակ չեն *«4-6 սմ հաստացումով»* արտահայտությունները և *«Սեղանի և փումբայի տեսանելի հատվածները պետք է պատված լինեն պոլիվինիլքլորիդային (PVC-0.4) եզրաժապավենով: Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր), Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի: Վնասվածքներից զերծ պահելու համար պետք է լինի փաթեթավորված: Նախքան ապրանքների պատրաստումը և/կամ մատակարարումը անհրաժեշտ է տեսքը, ձևը, գույնը և օգտագործվող նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:»* նախադասությունները:

**4-րդ չափաբաժնում** հստակ չեն *«Հիմքի փայտերը, նրբատախտակները միմյանց պետք է ձգվեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի հետևի մասում, սպունգի հետ միասին պետք է օգտագործվեն էլաստիկ ռետինային գոտիներ (7 սմ լայնությամբ)... Կահույքը բոլոր կողմերից պետք է լինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն արհեստական կաշվից: Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր), Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի: Վնասվածքներից զերծ պահելու համար պետք է լինի փաթեթավորված: Նախքան ապրանքների պատրաստումը և/կամ մատակարարումը անհրաժեշտ է տեսքը, ձևը, գույնը և օգտագործվող նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:»* նախադասությունները:

**5-րդ չափաբաժնում** հստակ չեն *«Հիմքի փայտերը, նրբատախտակները միմյանց պետք է ձգվեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի հետևի մասում, սպունգի հետ միասին պետք է օգտագործվեն էլաստիկ ռետինային գոտիներ (7 սմ լայնությամբ),... Կահույքը բոլոր կողմերից պետք է լինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն կտորից: Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր), Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի: Վնասվածքներից զերծ պահելու համար պետք է լինի փաթեթավորված: Նախքան ապրանքների պատրաստումը և/կամ մատակարարումը անհրաժեշտ է տեսքը, ձևը, գույնը և օգտագործվող նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:»* նախադասությունները:

**6-րդ չափաբաժնում** հստակ չեն *«Բարձրությունը ցածր դիրքերում՝ 1120-1230 մմ: Բարձրությունը վերին դիրքերում՝ 1190-1310 մմ: Լայնությունը՝ 620-630 մմ: Խորությունը՝ 710-770 մմ: Նստատեղի լայնությունը՝ 500-510 մմ: Նստատեղի խորությունը՝480-500 մմ: Թիկնակի բարձրությունը՝ 740-750 մմ: Արմնկակալի բարձրությունը նստատեղից՝ 180-190 մմ: Առավելագույն թույլատրելի բեռնվածությունը առնվազն՝ 120 կգ: Վնասվածքներից խուսափելու համար պետք է փաթեթավորված լինի գործարանային տուփերի մեջ: Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր), Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի: Վնասվածքներից զերծ պահելու համար պետք է լինի փաթեթավորված: Նախքան ապրանքների պատրաստումը և/կամ մատակարարումը անհրաժեշտ է տեսքը, ձևը, գույնը և օգտագործվող նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:»* նախադասությունները:

**7-րդ չափաբաժնում** հստակ չեն *«Բարձրությունը՝ 860-890 մմ: Լայնությունը՝ 580-610 մմ: Խորությունը առնվազն՝ 560 մմ: Թիկնակի բարձրությունը՝ 460-490 մմ: Նստատեղի լայնությունը՝ 460-480 մմ: Նստատեղի խորությունը՝ 420-430 մմ: Արմնկակալների բարձրությունը նստատեղից առնվազն՝ 210 մմ: Առավելագույն թույլատրելի բեռնվածությունը առնվազն՝ 120 կգ: Քաշը՝ ոչ ավելի, քան 8 կգ: Վնասվածքներից խուսափելու համար պետք է փաթեթավորված լինի գործարանային տուփերի մեջ: Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր), Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի: Վնասվածքներից զերծ պահելու համար պետք է լինի փաթեթավորված: Նախքան ապրանքների պատրաստումը և/կամ մատակարարումը անհրաժեշտ է տեսքը, ձևը, գույնը և օգտագործվող նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:»* նախադասությունները:

2. **«Ֆոտոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացրած առաջարկվող ապրանքի նկարագիր դաշտում՝ **2-րդ չափաբաժնում** հստակ չեն *«...սեղանածածկի (սեղանի երեսի) և ոտքերի եզրերը պրոֆիլապատ, 4-6 սմ հաստացումով, Սեղանի մնացած տեսանելի հատվածները պետք է պատված լինեն պոլիվինիլքլորիդային (PVC-0.4) եզրաժապավենով, ոտքերը միմյանց պետք է միացված լինեն միջադիրով (սեղանի երկայքով: Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր), Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի: Վնասվածքներից զերծ պահելու համար պետք է լինի փաթեթավորված: Նախքան ապրանքների պատրաստումը և/կամ մատակարարումը անհրաժեշտ է տեսքը, ձևը, գույնը և օգտագործվող նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:»* նախադասությունները:

**3-րդ չափաբաժնում** հստակ չեն *« Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր), Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի: Վնասվածքներից զերծ պահելու համար պետք է լինի փաթեթավորված: Նախքան ապրանքների պատրաստումը և/կամ մատակարարումը անհրաժեշտ է տեսքը, ձևը, գույնը և օգտագործվող նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:»* նախադասությունները:

Ինչպես նաև ներկայացրած հավելված 1.2-ում շտկել հայտարարագրի ստորագրման ամսաթիվը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով Հանձնաժողովը որոշեց՝ նիստը կասեցնել 01.10.2021թ.-ին՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ «Մերկադո» ՍՊԸ-ին և «Ֆոտոն» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 6, դեմ՝ 0:*

### 8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 05.10.2021թ. ժամը 11:45-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 6, դեմ՝ 0:*

### 9/. 05.10.2021թ. ժամը 11:45-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 05.10.2021թ. ժամը 11:45-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «Մերկադո» ՍՊԸ-ն և «Ֆոտոն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Մերկադո» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆոտոն» ՍՊԸ-ին հայտերը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 6, դեմ՝0:*

### 10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

05.10.2021թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Մերկադո» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆոտոն» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________________ Վարդան Թորոսյան

անդամներ՝ ______________________ Հարություն Օհանյան

______________________ Վազգեն Քեռյան

______________________ Մարիամ Համբարձումյան

______________________ Էլեն Մնացականյան

______________________ Սարգիս Սարգսյան

քարտուղար՝ ______________________ Անի Ներսիսյան